

## ԸՆՏՐԵԱԼԸ

Հոգու սըրբազն կըրակով վառուած  
Խջնում էր Մովսէս լերան գագաթից,  
Խջնում էր ամեղ պատգամներն առած՝  
Ծըլթայից հանող Աստուծոյ մօտից:

Եւ մինչ կանխատես աշքով իր հոգու  
Տեսնում էր գալոց իր ժողովրդի,  
Ու մինչ հրճում էր . . . ահա Շերքելից  
Զայներ բարկութեան ու խառն աղմուկի . . .

Եւ տեսաւ Մովսէս լերան բարձունքից,  
Ժողովուրդն այնուեղ Շերքն, Թովխոսում  
Աստուծ է շինել ոսկոց, արծաթից,  
Պարում է շուրջը ու հարրած գոռում.

— Ինչո՞ւ մեզ բերաւ Մովսէս անապատ,  
Լի Եգիպտոսից ինչո՞ւ հանեց մեզ . . .  
Ո՞ւր է մեր սըխտորն ու սխսր առատ . . .  
Այնուեղ Բանգիստ էր ու լիբն էր Էնակս . . .

Գոռում է եսպէս ու հարրած պարում:  
Ու . . . սուրբ Սինայի մըռոայլ ամպերում  
Կանգնեց մարգարեն, Զայեց դեպի վեր.  
— Մի՞թէ այս ամրոխն իմ եղրայրն է, Տէ՞ր . . .

Լուս եմ ձայնը լեռների գլխին,  
Ծովեր եմ պատում, անցնում անապատ,  
Հըրեղեն սիւնով տանում իր ուղին,  
Նա միշտ կասկածոտ, նա միշտ յուսահատ . . .

Տանջանքի միջից Շըկատում եմ ես  
Երկիրն աւետեաց թեռո՞ւ մըշուշում,  
Խոկ նա փոքրոդի, Կոյք ու կարճատես,  
Գերութեան սըխտորն ու սխսն է յիշում . . .

Եւ երբ ամպերում խօսում եմ բեզ նետ,  
Քեզնից փըրկութեան պատգամ եմ բերում,  
Նա այնուեղ ցածում մոլի՛, անհերե՛թ  
Ուսկի է պաշտում ու հարրած պարում . . .

Ինչո՞ւ եց, Աստուած, քո վեճ պատգամներ,  
Իմ տանջանքը ինչո՞ւ . . . Գոչեց զայրացած,  
Ու մեծ խորհուրդի բարեայ տախտակներ  
Ժայռերի գըլիսից նետեց դեպի ցած . . .

Բայց . . . միւս առաօտ, երբ որ դեռ քընած,  
Հանգչում էր ամրոխն աղմուկից լոգնած,  
Իր ցուազը ձեռքին բարձրանում էր նա  
Դարձեալ միայնակ վե՛ր դեպի Սինա: